պարվեստի լավագույն ավանդները։ Այդ է պատճառը, որ Սարյանի արվեստը հասկանալի է բոլորին և լայն ժողովրդականություն է վայելում ոչ միայն մեզանում, այլև աշխարհի բոլոր ծայրերում։

Հայրենի և համաշխարհային արվեստի զարգացմանը մատուցած ծառայությունների համար Վարպետը վայելում է ժողովրդի ջերմ սերն ու հարգանքը։ «Ես իմ ամբողջ հաջողություններով,— սիրում է կրկնել Սարյանը,— պարտական եմ իմ ժողովրդին։ Ժողովուրդն է, որ ոգևորեցնում է աշխատել, ստեղծագործել։ Ժողովուրդն է ստեղծում արվեստը իր գավակների ձեռքով։ Ես երջանիկ եմ ու հպարտ, որ պատկանում եմ այդ գավակների թվին։ Իմ ողջ կյանքում և այժմ ինձ թափ ու կորով, ապրելու և գործելու ուժ է տալիս ժողովրդի սերը։ Այդ պատճառով էլ ինձ շնորհված ամեն մի պատիվ ես համարում եմ պատիվ իմ ժողովրդին»։ Այդ գիտե ժողովուրդը։ Եվ այսօր, երբ Սարյանը արժանացել է Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման, ժողովուրդը բարի մաղթանքներ է հղում իր հանճարեղ գավակին՝ մեծ Վարպետին։

Վ. ՄԱՔԵԼՈՍՅԱՆ

ԱԿԱՆԱՎՈՐ ԲԺԻՇԿՆ ՈՒ ԳԻՏՆԱԿԱՆԸ

Լրացավ Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի և ՍՍՌՄ բժշկական գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, գիտության վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Լևոն Անդրեասի Հովհաննիսյանի ծննդյան 80 և բժշկական, գիտա-մանկավարժական ու հասարակական գործունեության 50 տարին։

Կյանքի փառավոր ուղի է անցել պատվարժան հոբելյարը. անգամ շատ համառոտ հետադարձ հայացքը փայլուն կերպով վկայում է այդ մասին։

Լ. Հովհաննիսյանը ծնվել է 1885 թ. Թբիլիսի քաղաքում։ 1909 թ. ավարտելով Խարկովի համալսարանի բժշկական ֆակուլտետը, նա իր բժշկական գործունեությունը սկսում է Թբիլիսիում, որոշ ժամանակ աշխատում է Ալավերդու հանքերում, ինչպես նաև Ղազախստանում, որտեղ գլխավորում է Կարմիր խաչի բժշկական ջոկատը սովի և համաճարակների դեմ մղված պայքարում։

Լ. Հովհաննիսյանի բուռն և բազմակողմանի գործունեությունը սկսվում է Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո։ Նա խոշոր մասնակցություն է ունենում Երևանի համալսարանի բժշկական ֆակուլտետի հիմնադրման և հետագայում Երևանի բժշկական ինստիտուտի կազմակերպման գործում։ 1923 թ. մինչև այսօր Լ. Հովհաննիսյանը անընդմեջ ղեկավարում է այդ ինստիտուտի ներքին հիվանդությունների դիագնոստիկայի ամբիոնը։ Հայաստանում համարյա չկան բժիշկներ, որոնք լսած չլինեն սիրելի ուսուցչի հետաքրքրական և տպավորիչ դասախոսությունները, որոնք այս կամ այն կերպ աշակերտած չլինեն նրան։

Լ. Հովհաննիսյանը պատկանում է այն գիտնականների շարքին, որոնք ունեն լայն մտահորիզոն և չեն սահմանափակում իրենց գործունեությունը առանձին նեղ բնագավառներով։ Դեռևս 1920 թ. Լ. Հովհաննիսյանը ղեկավարում է Հայաստանում մալարիայի դեմ պայքարը։



Նրա անմիջական նախաձեռնությամբ 1923 թ. Երևանում հիմնադրվում է Տրոպիկական ինստիտուտը, որի հիման վրա հետագայում կազմակերպվում է Մալարիայի և բժշկական պարազիտալոգիայի ինստիտուտը։

Հայաստանի հարուստ և բազմապիսի հանքային ջրերը չեն վրիպել գիտնականի ուշադրությունից։ Սկսած 1920 թ. նա սիստեմատիկ կերպով ուսումնասիրում է հանրապետության առողջարանային վայրերը և 1936 թ. լույս է ընդ-

ծայում «Հայաստանի հանքային աղբյուրները» շատ կարևոր մենագրություն։ Լ. Հովհաննիսյանի կողմից ղեկավարված հանձնաժողովի անխոնջ աշխատանքների շնորհիվ 1925 թ. հիմնադրվում է «Արզնի» առողջարանը՝ սրտաբանական կուրորտոլոգիայի այդ կարևոր կենտրոնը։

Անգնահատելի է Լ. Հովհաննիսյանի վաստակը հայ բժշկության պատմության գիտական ուսումնասիրման բնագավառում։ Բավական է նշել, որ դեռևս 1913 թ. նա Կովկասյան բժշկական ընկերության նիստում զեկուցել է այդ մասին, իսկ 1928 թ. լույս է ընծայել արժեքավոր մենագրություն։ Սակայն Լ. Հովհաննիսյանի խոշոր տաղանդը և շատ հարուստ գիտելիքները ամփոփվել են իր կապիտալ աշխատության՝ «Հայ բժշկության պատմության» հինգ հատորյակի մեջ, որը լույս է տեսել 1946—1947 թթ.։ Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի հայ բժշկության և կենսաբանության պատմության սեկտորը ականավոր գիտնականի և իր աշխատակիցների համար լայն հնարավորություններ է ստեղծում ուսումնասիրելու հայ բժշկության հարուստ ժառանգությունը և այն դարձնելու համաշխարհային գիտության սեփականություն։ Այդ խոշոր աշխատանքները բարձր գնահատական են ստանում, և Լ. Հովհաննիսյանը 1962 թ. ընտրվում է Բժշկագիտության պատմության նորաստեղծ միջազգային ակադեմիայի իսկական անդամ։

Մեծ են Լ. Հովհաննիսյանի ծառայությունները Հայաստանում սրտաբանության զարգացման գործում։ Նրա հետազոտությունները սրտային աղմուկների և ներողների խնդրում ստացել են համընդհանուր ճանաչում։ Նրա ղեկավարությամբ Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի ցանցում ստեղծվում է սրտաբանության սեկտոր, որը 1961 թ. վերածվում ինքնուրույն ինստիտուտի՝ սրտաբանության և սրտի վիրաբուժության ինստիտուտի։ Այդ կարևոր գիտական օջախի ստեղծումը, որի հետագա զարգացումը Լ. Հովհաննիսյանը հանձնեց երիտասարդ և եռանդուն գիտնականների, նոր գլուխ բաց արեց Հայաստանի բժշկագիտության պատմության մեջ։

Լ. Հովհաննիսյանի հեղինակությամբ լույս են տեսել ավելի քան 170 գիտական աշխատություններ, որոնց թվում ավելի քան 20 մենագրություններ և մի շարք դասագրքեր։ Նրա ծառայությունները հանրապետությունում բժշկական գիտական և մանկավարժական կադրերի պատրաստման, բժշկական գրականության, տերմինաբանության և բառարանագիտության ստեղծման և զարգացման, բժշկագիտական ընկերությունների կազմակերպման, հայ բժշկական մշակույթի տարածման գործում լավագույն գրականն են՝ գնահատելու նրան որպես ականավոր սովետական բժշկի, խոշոր գիտնականի ու մանկավարժի, հասարակական և մշակութային եռանդուն գործչի։

Թանկագին հորելյարին՝ մեծավաստակ գիտնականին ու բյուրեղյա մարդուն ցանկանում ենք քաջառողջություն, երկար կյանք, հետագա հաջողություններ, բեղմնավոր գործունեություն և նոր գիտական նվաճումներ։

Զ. ԴՈԼԱԲՋՅԱՆ

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ԵՐԵԿՈ

1965 թ. հունվարի 29-ին ՀՍՍՌ գիտությունների ակադեմիայում տեղի ունեցավ հորելյանական երեկո՝ նվիրված Փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի ավագ գիտաշխատող, փիլիսոփայական գիտությունների դոկտոր Վազգեն Կարապետի Զալոյանի ծննդյան 60 և գիտական գործունեության 35-ամյակին։ Գիտական կյանքի և գործունեության մասին զեկուցեց փիլիսոփայական գիտությունների թեկնածու Ա. Թևոսյանը։

Վ. Զալոյանը հանդիսանում է Սովետական Հայաստանի փիլիսոփայական-գաղափարական բնագավառի ավագ սերնդի հանաչված գիտնականներից մեկը։ Այդ տարիքը մոտենալով գեռևս 30-ական թվականներին, նա եռանդուն կերպով զբաղվում է մանկավարժական և գիտական գործունեությամբ։

Վ. Զալոյանը ծնվել է 1905 թ. Այնթապում (Լենինական)։ Ավարտելով Երևանի Աբովյանի անվան դպրոցը, 1923 թ. նա բնդունվում է պետական համալսարանի հասարակական գիտությունների ֆակուլտետը, որը հաջողությամբ ավարտում է 1926 թ.։ Մինչև 1930 թ. զբաղվում է մանկավարժական գործունեությամբ։ Այնուհետև կարգում է դիալեկտիկական և պատմական մատերիալիզմի կուրս բժշկական ինստիտուտում և Երևանի պետական համալսարանում։ Դասախոսական աշխատանքին զուգահեռ, 1930—34 թթ. նա միաժամա-